



ԿԿՈՒ

Մանկապատանեկան
Թերթիկ



Թիւր պատրաստեց՝
Մարտին-ԱՐՏԵՆ-ՇԱՀԻՆԵՆ
Նկարազարդեց՝
ՌԱՖԻ ԲԷՇԵՆԵՆ

ՓԵՏՐՈՒԱՐ Ա. - 2024
Թիւ - 4 -

ԽԽՈՒՆՁՆ ՈՒ ՁԻՆ

Խոշոր անտառի մը մէջ հպարտ ձի մը կ'ապրեր:

Օր մըն ալ ան կը տեսնէ փոքրիկ խխունջ մը, որ դանդաղ շարժումներով կը յառաջանար: Ան խխունջին կ'առաջարկէ վազքի մրցում մը կատարել, գիտնալով որ ինք շա՛տ աւելի արագ կրնար վազել.

- Յէ՛յ, խխունջ, վազքի մրցում ընե՛նք,- կը հարցնէ ան ծաղրանքով:

Խխունջը կը վիրաւորուի, բայց կը յօժարի մրցիլ անոր հետ:

- Լա՛ւ, եկո՛ւր Կիրակի օր մրցիւք,- կը պատասխանէ:

Ան տուն կ'երթայ եւ բոլոր միւս խխունջները կը հրաւիրէ այս հարցը քննարկելու եւ բոլորին կը պատմէ, թէ ինչպէս ձին գիտակցելով որ իրմէ արագավազ է, վազքի մրցում ընել առաջարկեց: Բոլոր



խխունջները ձիուն յաղթելու միջոց մը կ'որոնեն եւ որովհետեւ բոլորը նոյնանման են, կ'որոշեն շփոթեցնելով յաղթել անոր:

Երբ Կիրակին կը հասնի, անոնք շատ կանուխ իրենց տուներէն դուրս կու գան եւ կը սկսին պահուրտիլ իրարմէ փոքր հեռաւորութեան վրայ գտնուող վայրեր վազքի սկզբնակէտէն սկսեալ, մինչեւ աւարտին գիծը:

Մրցումը կը սկսի: Ձին քիչ մը կը վազէ, բայց ապշահար կ'ըլլայ երբ խխունջը իր առջեւ կը գտնէ: Ան կ'արագացնէ վազքը, բայց ապարդիւն:


Ձին կը սկսի աւելի ու աւելի արագ վազել: Որքան կը փորձէ, խխունջը տակաւին իրմէ առաջ կը մնայ:

Շատ ջանք թափելէն ետք, ան կը յանձնուի:

- Լա՛ւ, ես պարտուեցայ,- կ'ըսէ խոնարհութեամբ:


Բոլոր խխունջները միասնաբար ու բարձրաձայն կը ծիծաղին:

- Յա՛, հա՛, հա՛...




Կրնա՞ս գտնել ելքի ճամբան:


Իրաքանչիւր քառակուսիին մէջէն դուրս հանե՛ անկապ առարկան:



Պատասխաններուն համեմատ պատկերը գունաւորե՛ հետեւեալ ձեւով:
 6 պատասխանը կրող բաժինը՝ վարդագոյն
 7 պատասխանը կրող բաժինը՝ սեւ
 13 պատասխանը կրող բաժինը՝ կանաչ
 9 պատասխանը կրող բաժինը՝ կարմիր
 12 պատասխանը կրող բաժինը՝ կապոյտ
 8 պատասխանը կրող բաժինը՝ նարնջագոյն
 14 պատասխանը կրող բաժինը՝ մանիշակագոյն



Կրնա՞ս գտնել սենեակին մէջ կորսուած առարկաները:



ԲԺՇԿՈՒԹԻՒՆԸ ԿԵՆԴԱՆԻՆԵՐՈՒՆ ՄՕՏ



Չարմանալի արարածներ են կենդանիները: Անոնք կ'ընեն այնպիսի բաներ, որոնք յաճախ հիացում ու զարմանք կը պատճառեն մեզի:

Հիւանդ կամ անհանգիստ մարդոց համար կան դարմանատուներ ու հիւանդանոցներ, ուր բժիշկներ ու հիւանդապահներ խնամքով եւ դեղերով կ'առողջացնեն զիրենք: Իսկ հետեւեալ օրինակները ցոյց պիտի տան, թէ կենդանիներուն մօտ ալ բժշկութիւն կայ, քանի որ անոնք ալ ունին դարմանումի եղանակներ եւ նոյնիսկ՝ դեղեր:

Շատ անգամ կը տեսնենք կատուներ ու շուններ, որոնք լիզելով կը բուժեն իրենց մարմնին վնասուած կամ վիրաւորուած մասը:

Նկատուած է նաեւ, որ գէր կատուներ ծով կը պահեն նիհարնալու համար:

Շունը երբ օձէն խայթուի, անմիջապէս կը վազէ խոտերուն մէջ եւ կը սկսի խոտ ճաշակել, իբրեւ հակաթոյն:

Փիղին համար կը պատմուի թէ երբ վիրաւորուի, կ'առանձնանայ անտառի մը խորերը, կնճիթովը տերեւներ կը փրցնէ, զանոնք իր վերջին վրայ կը դնէ եւ յետոյ երեսը հողով կը ծեփէ:

Իսկ գոմէշները ունին իրենց բորոտութիւնը դարմանելու համար տարօրինակ եղանակ մը: Մորթը բորբոքած գոմէշը իր ընկերներէն կը բաժնուի, կ'երթայ, գլուխը ճախճախուտի մը ցեխերուն մէջ կը թաղէ եւ օրերով, անօթի ու անքուն կը մնայ այնտեղ մինչեւ որ նոր մազեր սկսին դուրս գալ իր մարմինէն:

**ԻՆՉՈ՞ՒՄ ԱՎՏՆԵՐՍ ՉԱՄԻՉԻ ՊԷՍ
Կ'ԵՐԵԻՒՆ, ԵՐԲ ԵՐԿԱՐ ԺԱՄԱՆԱԿ
ԿԸ ՄՆԱՍ ԲԱՂՆԻՔԻ ՏԱՇՏԻՆ (պանիոյ) ՄԷՋ:**

Երբ լոգանքի համար երկար ժամանակ տաշտին մէջ կը մնանք, եւ կամ ջուրով կը զբաղինք, մեր մատները կը թրջուին (ինչպէս որ թաշկինակը ջուր կը ծծէ). ջուրէն դուրս գալէն ետք, մեր մատներուն ծայրերէն ջուրը դուրս կը կաթի: Դուրս կը կաթի նաեւ այն ջուրը, որ նախապէս գոյութիւն ունէր մեր մաշկին տակ: Այնպէս որ մեր մատներուն ծայրերը կարճ ժամանակ ետք կնճիռ կը գոյացնեն եւ կը նմանին... չամիչի:



**ԻՆՉՈ՞ՒՄ ԱՎՏՆԱՅԵՏՔԱՍ
ԿԸ ՏԱՐԲԵՐԻ ՈՒՐԻՇՆԵՐՈՒ
ՄԱՏՆԱՅԵՏՔԵՐԷՆ:**

Մատնահետքը, (մատներուն ծայրի մանրիկ գիծերը, որոնք դժուար կը տեսնուին), կը սկսի կազմուիլ նախքան մեր աշխարհ գալը: Տարօրինակ գիծեր են անոնք, որոնք օղականման եւ ոլորուն են եւ անկարելի է որ աշխարհի վրայ ուրիշ անձ մը ճիշդ նոյն գիծերը ունենայ: Մեր ոտքերուն հետքերն ու ափերուն գիծերը նոյնպէս կը տարբերին ուրիշ անհատի մը գիծերէն: